DOI: 10.54503/1829-4324.2023.2-289

4. ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Ռոբերտ Ներսեսի Սարինյան
Բելլա Վալերիի Գաբրիելյան
Լիանա Կառլենի Հարությունյան

Հոդվածը ստացվել է՝ 09.10.23, ուղարկվել է գրախոսման՝ 10.11.23, երաշխավորվել է տպագրության՝ 07.12.23

Փոխվել է վերջին տարիների հանրապետության տնտեսագիտական մտքի տեսադաշտը: Պակասել են տեսական բնույթի ուսումնասիրությունները: Առաջնային է դարձել ոլորտի, ճյուղի, կազմակերպության մակարդակով հետազոտությունները՝ տուրք տալով առաջարկությունների գայթակղությանը: Բոլորն առաջարկություններ են անում՝ և՛ սկսնակները, և՛ մասնագետները, տեղին, թե անտեղին, հիմնավորված կամ չհիմնավորված, և ինչպես ասում է գրականագետը «բոլորը ուսուցիչ են դարձել առանց աշակերտ լինելու»: Պատահական չէ, որ հաճախ հրապարակումներում կարելի է հանդիպել այս կամ այն ոլորտի «հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» վերնագրերի, մի քանի էջանոց հոդվածն ավարտելով վերլուծությունը գերազանցող, հաճախ կրկնվող մի քանի տասնյակի հասնող լուծումներով և առաջարկություններով, անգիտանալով, որ դրանցից յուրաքանչյուրը կապված է բազմաթիվ այլ լուծումների հետ: Բնավ չանտեսելով դրանցում տեղ գտած նաև օգտակար դիտարկումները, սույն դիտողությունների համար նյութը հեղինակի կողմից կատարվել է հայեցողական սկզբունքով:

1.«Թվային տնտեսության» գործնական սկզբունքները

Ամերիկյան մարդաբան Ռայմոնդ Կուրցվեյլը «Մտածող մեքենաների դարաշրջանը» (1990) աշխատությունում կռահումներ է կատարում, թե 2020-ին անձնական համակարգիչը կհասնի մարդկային ուղեղի հետ համեմատվող հզորության, 2025-ին՝ ի հայտ կգա գաղժետ-իմպլանտների մասսայական շուկան, 2031-ին կտպագրվի մարդկային օրգան, 2042-ին՝ հասնելով անմահության իրականացման երազանքին և, որ 21-րդ դարի կեսերին ոչ կենսաբանական ինտելեկտը կդառնա ավելի խելացի, քան կենսաբանականը, իսկ երկրագունդը կփոխարինվի մի հսկայական համակարգչի և աստիճանաբար այդ պրոցեսը կարող է տարածվել ամբողջ Տիեզերքի վրա[1]:

Տասնամյակներ անց այդ կանխատեսումներից շատ բան դարձել է իրողություն: Այն հարցին, թե իր կարծիքով ի՞նչն ավելի ներգործեց 20-րդ դարի երկրորդ

[1] «Литературная газета», №24, 19-25 июля, 2019г.

կեսի պատմության ընթացքի վրա՝ Երկրորդ համաշխարհային պատերա՞զմը, թե՞ Հիտլերը, ամերիկյան ռոքի արքան ժպտացել է՝ «Ինչպես կարելի է սովորական այդ երևույթները համեմատել ռոքի և էլեկտրական կիթառի հետ»։

Թվային տեխնոլոգիաները հեղաշրջեցին հասարակության կացությունը, հիմնովին փոխելով մարդկանց և կազմակերպությունների փոխհարաբերությունների չափումները, թափանցելով հասարակական կյանքի ոլորտները՝ բոլորի համար կարծես նախանշելով ընդհանուր շարժման ուղղությունը իր դրական և ստվերային նշանակությունների մեջ։

* *
*

Մերի Մանուչարյանի «Թվային տնտեսություն» (Եր., 2022) մենագրությունը ուրվագծելով թվայնացման սոցիալ-տնտեսական ֆենոմենը կոնկրետացնում է ագրարային ոլորտի զարգացման ուղղությունը իր «մարտահրավերների և մեծ հնարավորությունների» վերլուծականներով։ Թվային տնտեսությունը լոկ ժամանակակից տեխնոլոգիական ներդրումներ չեն։ Ուստի չեմ ուզում անդրադառնալ գրականության մեջ թվային տնտեսության տրվող սահմանումներն։ Զուր չի ասվում. բոլոր սահմանումները ձգտում են մոտավորության։ Այնուհանդերձ, հեղինակը իր բնութագրության մեջ փորձում է համատեղել բովանդակային լայն շառավիղներ, թե այն «առաջին հերթին ամբողջ տնտեսական կառուցվածքի փոփոխություն է, միասնական թվային շուկայի ստեղծում, նոր արտադրողների ի հայտ գալ, որտեղ հաջողությունը կախված չէ արտադրողների թվից, այլ նորարարական թվային տեխնոլոգիաների կիրառումից և բիզնեսն առցանց դաշտ փոխանցումից, նոր սպառողներից, ովքեր տիրապետում են տեղեկատվական տարածքի հետ աշխատելու հմտություններին, աշխատանքի ոչ ստանդարտ ձևերով աշխատատեղերից և արտադրված արտադրանքից անցում դեպի դրա որակի մշտական բարելավում»[1]։ Ագրարային ոլորտի զարգացման ուղղությունը համարելով թվային տնտեսության խորհուրդը, խնդիրը դիտարկվում է արդի բեկման հանգամանքի վրա, այն նվաճումների, որոնք տեղ են գտել ԱՄՆ-ի, Նիդեռլանդների, Գերմանիայի, Իսրայելի, Լեհաստանի և այլ երկրների փորձի առումով՝ ուրվագծելով այն միջոցառումները և արգասավորելով հանրապետության ագրարային ոլորտի նոր նվաճումներով։ Ինքնին՝ միջազգային փորձը կարող է առաջադրել ուղեցույցներ, բայց ոչ «համադարման» լինել հանրապետության գյուղատնտեսության բոլոր խնդիրների համար, որը պահանջում է «շատ այլ բարեփոխումներ և ենթակառուցվածքային ներդրումներ»[2]։ Շատ են ագրարային ոլորտի հատվածային բաղադրիչները և հեղինակը հանգամանալից անդրադառնում է դրանց թվայնացման տեղայնացման հակասություններին, առանձնահատկություններին

[1] Մ.Գ. Մանուչարյան, «Թվային տնտեսություն. ագրարային ոլորտի զարգացման հեռանկարներ», Եր., 2022, էջ 39։

[2] Նույն տեղում, էջ 70։

և կախվածությունների փաստին, իր ասելիքն ամփոփելով եզրակացություններով, որոնք կարող են նպաստել հանրապետության ագրարային ոլորտի արդյունավետության բարձրացմանը: Այս առումով կարևոր է այն հանգամանքը, որ մենագրության դիտողությունները կառուցված են իրական-գործածական սկզբունքի վրա:

* *
*

Վերջին տասնամյակներում հասարակության մտայնությունում թվայնացման դրական և բացասական հետևանքների հատումներում, ձևավորվել է որոշակի մոտեցումներ՝ կապված արժեքների կատարվող և ապագայում սպասվող փոփոխությունների վերաբերյալ: Ինչպես նկատում է Ն.Դ.Օսիպովան, տեղ գտած բանավեճերը ընթանում են հետևյալ հարցերի շուրջ. թվայնացման դիֆերենցումը նմաններից, բայց ոչ դրա նույնական պրոցեսներից, տնտեսական ու սոցիալական կյանքի թվայնացման բնագավառը և ընդգրկվածությունը, սոցիալական իրականության թվայնացման արժանիքներն ու թերությունները, թվայնացումը, որպես կրթության պրոցեսի հումանիտարացման իմպերատիվ: Հեղինակն իրավացիորեն նկատում է, որ գիտական միտքն իր որոնումներում դեռևս շատ անելիքներ ունի նշված հարցերի պատասխանների նոր հիմնավորումների համար[1], որքանով թվայնացումն ավելի բարդ լուծումներ է ենթադրում, քան լոկ նրա բերած օգուտների դրվատանքը: Հենց այդ դիտակետից է Մ.Կճանյանի փիլիսոփայական-մեթոդոլոգիական դիտողությունները կրթական ոլորտի թվայնացման բերած ռիսկերի վերաբերյալ՝ կապված համակարգի հումանիտարացման հարցի հետ: Այս առումով որո՞նք են թվայնացման քննության առաջադրույթները. Թվայնացումը ոչ գծային պրոցես է և ենթակա չէ միանշանակ գնահատականի, այն պետք է ունենա արժեքային-իմաստային նշանակություն ինչպես նեղ մասնագետի, այնպես էլ ստեղծագործող անհատի ու հումանիստի պատրաստման համար: Վերջինս դետերմինացված է հատկապես ապահումանիտարացված աճող միտումների հետ, ուստի այն պետք է դառնա կրթական համակարգի բացարձակ իմպերատիվը՝ օրակարգի հարց դարձնելով ոլորտի տարածքի «հիգիենացման ու հումանիտարական մեթոդոլոգիայի մշակումը»[2]: Տվյալ դեպքում խոսքը թվայնացման բերած թվաբանական օգուտի և օգտակարության մասին չէ, որի մասին շատ է գրվում, և դա անժխտելի է, այլ այն իրողության, որ զուգահեռ «հասարակության ինտելեկտուալ մակարդակը անկման ցուցանիշ ունի»: «Թվայնացման մտահոգ սոցիալական հետևանքներից է մարդկանց տեղեկատվական գերբեռնվածությունը: Ժամանակակից կրթական համակարգը,- նկատում է Ն.Օսիպովան,- ուսանողից պահանջում է ոչ թե ապագա մասնագիտական գործունեության

[1] Вестник Московского университета, серия 18. Социология и политика, 2022, т. 28, №3, с.7.

[2] Проблемы социально-экономического развития, поиски, перспективы, решения, Российский экономический университет им. Г.В.Плеханова, Ереванский филиал, сборник научных статей, 2022, №1 (7), с. 176.

հիմնարար գիտելիքների յուրացում, այլ լոկ անհրաժեշտ տեղեկատվության տիրակալման հմտությունների փնտրտուք, որոնց մեծ մասը չի յուրացվում… չեն տիրապետում տվյալ տեղեկատվության սելեկցիայի մեխանիզմներին, հաճախ գիտական տեսանկյունից հիմք ընդունելով կասկածելի աղբյուրների տվյալները...: Զրկված լինելով դասախոսների հետ լիարժեք շփումներից, չուսումնասիրելով առարկայի սկզբնաղբյուրները, չխորանալով ուսումնասիրվող հասարակական գիտությունների հիմքերի մեջ ունակ չեն լինում ինքնուրույն ընտրության և հաշվառելու դրա հետևանքները»[1]: Որպես նույնի շարունակություն. «Ես դա նկատում եմ ուսանողների օրինակով,-մտորում է հայտնի կինոռեժիսոր Անդրեյ Կոնչալովսկին,- որոնք արդեն չեն գալիս գրադարաններից գրքեր վերցնելու, այլ ամբողջ տեղեկատվությունը փնտրում են ինտերնետում: Քաղաքակրթությունը դառնում է պակաս հումանիստական: Ինչպես դա կանգնեցնել: Ես չեմ պատկերացնում: Ես բավականին հոռետես եմ վերաբերվում պահին, որը կանգառ չունի: Թեև դա շատ լավ է, բայց այն կանգառ չունի, անցողիկ է: Առայժմ կան արվեստագետներ, ովքեր փորձում են հասկանալ էությունը, բայց նրանք արդյո՞ք ապագայում լսարան կունենան: Խիստ կասկածում եմ... Տեղի են ունենում տեղաշարժեր, որոնք մարդկանց կտրում են իրենց արմատներից, ավանդույթներից: Այդ խզումը նույնիսկ տեսանելի է անգամ աշխարհի թատրոնների վիճակից, գրքեր կարդացող մարդկանց քանակից: Ինձ մոտ այն զգացողությունն է, որ ինչ-որ բան վերջանում է, որ մենք կարող ենք կորցնել հաջորդ սերունդը, որովհետև մենք արդեն չենք դաստիարակում ո՛չ ուսուցիչներ, ո՛չ ծնողներ..., իսկ եթե նրանք չկան, ապա մնացածը ապարդյուն է»[2]: Այսինքն՝ կորցնում ենք ապագա սերունդների հանդեպ պատասխանատվությունը, աճում է ապագայի անորոշության տագնապը[3]:

Գրականության մեջ, և ոչ առանց հիմքի, խոսվում է թվայնացման և ընդհանրապես տեղեկատվության տարբեր միջոցների ընձեռած մի երևույթի՝ այսպես կոչված, «կրթվածության պատրանքի» մասին, որը հաճախ կառուցված է ֆրագ-

---

[1] Вестник Московского университета..., с.18.

[2] Տե՛ս, АиФ, №29, 2020 (Ինտելեկտուալ նահանջը տեսանելի է հենց Երևանի գրախանութներում ազգային և համաշխարհային դասականների աշխատությունների, փողոցների անցումներում ընթերցողներ չգտնող գրքերի՝ որպես «ընթերցող հասարակությունից» մնացած ժառանգություն կուտակումներից: Իսկ ընդամենը երեք տասնամյակ առաջ դրանք կարելի էր ձեռք բերել մեծ դժվարությամբ: Որոշ հանդեսների համար գործում է միայն էլեկտրոնային տարբերակը, ինչը սպասվում է նաև գրքի ապագային):

[3] Այս իմաստով ուշագրավ եմ դիտում Մ.Վ.Կոստոլոմովայի «Цифровая деваиция как феномен новой социальной реальности: методологические основания и концептуализация понятия ...» հոդվածը, որում հեղինակը թվային սոցիալական իրականությանն անցման պայմաններում սրում է կատարվող փոփոխություններին համապատասխան դեվիանտական տեսության ճշգրտման ու կոնցեպտուալացման հարցը, այն բովանդակային տրանսֆորմացիան, որ տեղի է ունենում գիտության ու կրթական ոլորտներում, սոցիումի միջին վիճակագրական անդամի վրա ունեցած ազդեցություններում (Տե՛ս, Социологическая наука и социальная практика, М., 2020, т.8, с. 41-53):

մենտար և մակերեսային դատողությունների վրա։ Եվ հենց այդ հարաբերակցության մեջ պիտի փնտրել այնպիսի ռիսկային երևույթների առկայությունը, ինչպիսիք են վիրտուալ կախվածությունը, մտավոր կարգապահության դեֆիցիտը, պլագիատը, էթիկական նորմերի խանգարումները, օտարվածությունը, հոգեբանական շեղումները, ապահումանիզացիայի աճող միտումները։ Ինչպես ասում են՝ ժամանակի չափման միավորը հիշողությունն է՝ խտացված գրքերում։ Անցյալի պատմությունը, կարծես, վերանում է. «Համեմատեք 18-19-րդ դարերի գաղափարները 20-րդ դարի գաղափարների հետ,- նկատում է Ս.Սարինյանը,- և պատկերը պարզ կլինի։ Արդի մարդկությանն առավելապես գրավում է հաճույքը, «կյանքի փիլիսոփայությունը» գերադաս է ամեն ինչից՝ «ես ապրել եմ ուզում», «կյանք հանուն կյանքի», սեռը և մերկության վայելքը ավելի է գնահատվում, քան գիտական հայտնագործությունը։ Բնության և պատմության հարաբերակցությունը հակադարձվել է, պատմությունը մղվել է երկրորդ պլան, բնությունն իշխում է ամենուրեք և պատմությունն իսկ գործում է բնության ոլորտում»[1]։

XX դարասկզբին «Մշակը» հետադարձ հայացքով անդրադառնալով անցած պատմաշրջանների տնտեսական, փիլիսոփայական ու սոցիալական ուսմունքներին, գտնում է, որ դրանք բոլորն էլ ունեցել են միագիծ բովանդակություն և իրենց էությամբ հոռետեսական են «երջանկության առեղծվածի» հարցերում։ Հեղինակը քննադատում է Ժան Ժակ Ռուսոյի հասարակության «բնական վիճակի» վերաբերյալ տեսությունը, իբր, մարդկանց միջև տիրել է համերաշխություն ու ներդաշնակություն, որ չնայած նրա «Հասարակական դաշինքի» հրատարակումից անցել է մեկ ու կես դար, սակայն ոչ միայն թուլացել է Թ.Հոբսի հռչակած «բոլորի պատերազմը բոլորի դեմ» սկզբունքը, այլև «քաղաքական բռնակալությունը փոխարինվեց կապիտալի բռնակալությամբ։ Գոյության կռիվը ստացավ ավելի ուժ ու տենդոտ կերպարանք»[2]։ Բարոյագիտությունն առաջադիմեց, միջին դարերի աստվածաբանությանը փոխարինեց Կանտի ռացիոնալիզմը «աստվածային սանկցիան տեղի տվեց մարդկային գերագույն ու անկախ բանականության սանկցիային», «մշակվեցին անթիվ, անհամար կատեգորիաներ», որոնք նպատակ ունեին հասարակական հարաբերությունների բարոյական կատարելագործման միջոցով հաղթահարելու «սանձարձակ» եսի «պաշտամունքը»[3]։ Նշված դիտողությունները համահունչ են XXI դարասկզբի համար։ Ամենատարբեր մասնագետները՝ փիլիսոփան ու տնտեսագետը, պատմաբանն ու քաղաքագետը, ֆիզիկոսն ու հոգեբանը, կենսաբանն ու մնացածները, կատարում են դիտողություններ՝ փորձելով ուրվագծել ներկա և ապագա զգացումների ինչ-ինչ միտումներ։ Դրանք և՛ լավատեսական են, և՛ հոռետեսական, մի դեպքում կանխատեսում մոտալուտ կործանումը, մի այլ դեպքում դրվատում գլոբալացման բերած բարեմասնություն-

---

[1] Սերգեյ Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, հ.Ա, Եր., 2004, էջ 397։

[2] «Մշակ» 1902, № 97։

[3] Նույն տեղում։

ները, հասարակության ապագա հեռապատկերը կապում նրա հումանիզացման հետ և այլն։

Բոլոր մեծ բնագետները իրենց հետազոտական գործունեության մեջ ներառել են հասարակագիտական բաղկացուցիչը՝ ձգտելով աշխարհի ունիվերսալ ճանաչողությանը։ Հայտնի ֆիզիկոս Մաքս Բորնը նկատում է, թե « Ես ուսումնասիրել եմ բոլոր ժամանակների փիլիսոփաներին և բազմաթիվ պայծառ գաղափարների եմ հանդիպել նրանց աշխատանքներում, բայց ոչ մի կայուն առաջընթաց չեմ կարողացել նկատել դեպի իրերի էության ավելի խոր իմացությունը կամ ըմբռնումը»[1]։ Ն.Գոգոլի պատմվածքներից մեկում այսպիսի մի արտահայտություն կա. «փիլիսոփան, բոլոր չորս կողմերը ոտքերով փնտրելով, վերջապես, կցկտուր ասաց՝ իսկ որտեղ է ճանապարհը»։

2. Նոր աղքատության ֆենոմենը

Աղքատության թեմատիկան հասարակագիտական մտքի ամենահնաբնակներից է՝ այն ուղղորդելով խնդրի լուծման որոնումների։ Այս իմաստով Լյուդվիգ Միզեսը հասարակության պատմությունը բաժանում է երկու էտապների՝ մինչկապիտալիստական և կապիտալիստական. ինչ գոյություն ունի «ազատ կապիտալիզմը, այլևս գոյություն չունի աղքատության պրոբլեմը այն իմաստով, ինչ իմաստով այդ հասկացությունն օգտագործվել է կապիտալիստական հասարակության պայմանների համար։... Աշխատունակ պաուպաերներ այլևս գոյություն չունեն։ Կապիտալիզմի պայմաններում աղքատություն հասկացությունը վերաբերում է միայն նրանց, ովքեր ընդունակ չեն իրենք իրենց համար հոգալու»[2]։ Ինչ խոսք, այսպիսի բաժանումը պայմանական է, որքանով աղքատության խնդիրը ուղեկցել է կապիտալիզմին իր ամբողջ ընթացքում,իր լուծումների մեջ ծայր տալով ամենատարբեր տեսությունների։ Բայց իրողություն է նաև այն, որ խորհրդային համակարգը, իր թերություններով հանդերձ, աշխատելու, բնակարանի և սոցիալական այլ խնդիրների առումով որոշակի լուծումներ էր տվել։ Թող դա լիներ աղքատության խնդրի ոչ լիարժեք լուծումներ, բայց լուծում էր՝ հասարակության հարաբերական ապահովվածության առումով։

1990-ականներին անցումը շուկայական հարաբերություններին նշանավորվեց տնտեսական անկման, գործազրկության, սոցիալական անապահովվածության աննախադեպ աճով։ Իրականացվող ռեֆորմներն ինքնին պարտադրում են հարցը, թե որքանով են դրանք նպատակ հետամտում բարելավելու բնակչության սոցիալական կացությունը։ Իսկ վերջինս ենթադրում է աշխատավարձի այնպիսի մակարդակի առկայություն, որը թույլ է տալիս ապահովելու անհատի գոնե հնարավոր գոյությունը։ Աշխատանքի՝ որպես տնտեսական ռեսուրսի գնի հարցը, ըստ էության, դուրս էր մնացել ռեֆորմների համակարգից։ Մինչդեռ այն ֆունկ-

---

[1] Մաքս Բորն, Իմ կյանքը ու հայացքները, Եր., 1978, էջ 42։

[2] Людвиг фон Мизес, Человеческая деятельность. Трактат по экономической теории, Челябинск, 2005, с. 785.

ցիոնալ նշանակություն ունի և ուղղակիորեն առնչվում է մարդու հասարակական դերի, մասնագիտական պահվածքի, այլ խնդիրների հետ, որոնց միջոցով նա պետք է նպաստի նոր ձևավորվող համակարգի ստեղծմանը: Իսկ եթե չի սահմանվում աշխատանքի գնի ստորին չափը, ապա պիտի սկիզբ առներ հակասությունը գների հախուռն ազատականացման և շուկայական սկզբունքներով ձևավորվող ծախսերի կառուցվածքի միջև: Ինքնաբերաբար աղքատության հարցը պիտի դրվեր սուր կետի վրա, ավանդական հասկացությամբ աղքատներին զուգահեռ ձևավորելով այսպես կոչված «նոր աղքատների» ի հայտ գալը: Վերջինս ինքնին նորություն չէր, որն անցյալ դարի 70-80-ական թվականներին իր դրսևորումներն ուներ Արևմտյան զարգացած երկրներում և այդ հասկացությունը շրջանառվում էր հասարակագիտական գրականության մեջ: Սույն հարցի քննությունն է ակնկալում Գ.Վարդանյանի և Գ.Մամիկոնյանի «Նոր աղքատներ» հասկացություն. պատմություն և դրսևորումներ» ուսումնասիրությունը[1]: Հասկացության ստուգաբանության առումով ավելի տարողունակ է ներկայանում սոցիոլոգիական բառարանից հեղինակների բերված այն բնորոշումը, ըստ որի ««նոր աղքատները» բնակչության այն շերտերն են, որոնք իրենց կրթությամբ և որակավորմամբ, սոցիալական կարգավիճակով և ժողովրդագրական իրավիճակով նախկինում երբևէ չեն պատկանել բնակչության ստորին շերտերին (դրանք են՝ պետական հատվածում զբաղված բյուջետային հիմնարկների աշխատողները՝ բանվորները և ծառայողները, որոնք ներկայում իրենց կենսամակարդակի իջեցման հետևանքով տվյալ պահին գտնվում են աղքատության շեմին)»[2]:

Հեղինակներն իրավացիորեն հենց այդ դրսևորումներն են տեսնում այն տնտեսական քաղաքականության հետևանքներում, որոնք բնորոշ էին հատկապես Ռեյգանոմիկային՝ ԱՄՆ-ում, Թեթչերիզմին՝ Մեծ Բրիտանիայում, տնտեսական ռացիոնալիզմին՝ Ավստրալիայում: Հայտնի է Ամերիկայի նախագահ Ռոնալդ Ռեյգանի այն արտահայտությունը, թե «բարձրացրեք առագաստները, թող քամով լցվեն, իսկ դուք գնացեք խցիկը՝ կոկտեյլ խմելու»[3]: Տնտեսական ազատությունը, մրցունակությունը և բաց տնտեսությունը, հավասարակշռված բյուջեն և հարկերի կրճատումն այն լծակներն են, որոնք կխթանեն տնտեսական ակտիվությունը: Հարկերի կրճատման գանձարանային քաղաքականությունն այն հիմնական միջոցն է, որը կբերի նոր ինվեստիցիաների, զբաղվածության, համախառն ներքին արդյունքի և բյուջեի եկամուտների աճի: Այսինքն՝ տնտեսության կարգավորման նեոքեյնսականության պահանջարկի կարգավորման փոխարեն՝ պետության դերի կրճատում և կարգավորում առաջարկի տնտեսության միջոցով:

Թեթչերիզմի կառավարությունն Անգլիայում ելակետ ունենալով «մոնետարիզմի վերահսկողություն դրամական զանգվածի վրա» պոստուլատը, տնտեսու-

---

[1] Տե՛ս, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու, 2022, №2, էջ 431-443:

[2] Սոցիալ-տնտեսական զարգացման... էջ 434:

[3] Տե՛ս, Правда, 27 февраля, 1989г.

թյան կարգավորման բանալին կապում էր ազատ ձեռներեցության, տնտեսական ազատություն և ծայրահեղ անհատականություն եռանդամ կապակցությունների վրա, որն ուղեկցվում էր ազգայնացված ձեռնարկությունների սեփականաշնորհումամբ, սոցիալական ծրագրերի կրճատմամբ և այլն: Դժվար չէ նկատել, որ նոր հարթակի վրա էր դրվում Մեծ դեպրեսիայից հետո ձևավորված «սոցիալական պաշտպանության համակարգի պետության ակտիվ մասնակցության գաղափարը»՝ բերելով հասարակության մի որոշակի շերտի զրկանքների որպես «նոր աղքատների»:

Գ.Վարդանյանը և Գ.Մամիկոնյանը բերելով տվյալներ 2016-2020թթ. Հանրապետության բնակչության խոցելի խմբերից՝ կենսաթոշակառուների կենսաթոշակի միջին չափի վերաբերյալ, կարևորում են ՀՀՎԿ վիճակագրական ծրագրում ներառել համապատասխան տեղեկատվություն հանրապետությունում «նոր աղքատներ» բնակչության խմբի վերաբերյալ: Հիմնավորելով «նոր աղքատների»՝ որպես սոցիալ-տնտեսական երևույթի ուսումնասիրությունը, առաջարկվում է այն իրականացնել տնտեսական որոշակի ցուցանիշների համակարգվածության հիման վրա, որը կներառի բնակչության եկամուտների ցուցանիշներ բնակչության կողմից նյութական բարիքների և ծառայությունների վրա կատարված ծախսերի և սպասարկման ցուցանիշներ, խնայողություններ, կուտակված գույքի ցուցանիշներ, բնակչության եկամուտների, աղքատության մակարդակի և սահմանների տարբերակման ցուցանիշներ, բնակչության կենսամակարդակի՝ որպես կարևորագույն սոցիալական կատեգորիայի ընդհանրացնող գնահատականների ցուցանիշները՝ հիմնվելով այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք կենսամինիմումը և սպառողական զամբյուղն են[1]:

3. Բարձրագույն կրթության և աղքատության փոխկախվածությունը

Բարձրագույն կրթության և աղքատության փոխկապակցվածության՝ որպես սոցիալական ուղղվածության հարցի խնդիրներին է վերաբերում Կարինե Հարությունյանի անդրադարձը: Այն, ըստ էության, ընդհանրացվում է մի պարբերությամբ, որ բարձրագույն կրթությունը իր գործնական հնարավորությունների մեջ երաշխավորում է բարձր եկամուտ ունենալու հանգամանքը, թե այդ խավի մոտ «բնակչության շրջանում ծայրահեղ աղքատներ, ըստ էության, չկան, իսկ չափավոր աղքատների և աղքատների թիվը բավականին փոքր է»[2]: Նկատեմ, որ հեղինակի հարցադրումներն ուշագրավ են և հարուցում են հարցեր ու դնում նոր ուսումնասիրությունների անհրաժեշտությունը: Նախ, հարկ է նկատել, որ աղքատների վերը նշված սահմանները պայմանական բնույթ ունեն: Եվ, որ շատ կարևոր է, բարձրագույն կրթության և աղքատության փոխկապակցվածությունը չի կարելի ընկալել որպես միայն եկամուտներ ստանալու գաղափար, համարժեք հասկացություններ: Այդ կապի ուղղվածությունը մի զգալի մասով հատկանշվում

[1] Սոցիալ-տնտեսական զարգացման..., էջ 438:

[2] Տե՛ս, Բանբեր Երևանի համալսարանի. տնտսագիտություն, 2022, №1, էջ 32:

է մասնագիտական որակների կորուստի հաշվին, որի իրացման դժվարությունների հետ կապված բարձրագույն կրթություն ունեցողները եկամուտներ են փնտրում այլ ոլորտներում ժամանակին կատարված հասարակական ծախքերի կորուստների գնով: Նկատեմ, որ դրանում դրսևորվում է նաև նոր ժամանակների առանձնահատկություններից մեկը, առաջնային նշանակություն տալով ոչ թե գաղափարի, այլ առօրյա «պետքերի» բավարարության անհրաժեշտությանը:

Հեղինակն առաջադրված խնդրի տեսադաշտի վրա անդրադարձ է կատարում ՀՀ բնակչության տարբեր սոցիալական խմբերի ընդգրկվածության, բուհերում ուսանողների թվաքանակի և անվճար-վճարովի հիմունքներով սովորողների համամասնության, ուսման վարձերի չափերին: Նյութի համակարգումը զուգորդվում է փաստական վերլուծություններով, և կատարվող փոփոխությունների ճանաչողական կարևոր ընդհանրացումներով:

Չեմ ուզում անդրադառնալ ուսումնասիրությունում բերված թվերի լեզվի հիմնավորումներին, այլ պարզապես ամենաընդհանուր ձևով ներկայացնելու կրթական համակարգում հեղինակի արձանագրած խզումները.

- բարձրագույն կրթություն ստացողների թիվն աճում է ընտանիքների բարեկեցության մակարդակի աճին զուգընթաց, ոչ աղքատ ընտանիքներից սովորողների թիվը 5,4 անգամ մեծ է, քան աղքատ և չափավոր աղքատ ընտանիքներից, իսկ ծայրահեղ աղքատ ընտանիքներից սովորողներ գրեթե չկան,
- բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում սովորողների թիվը (ինչպես վճարովի, այնպես էլ անվճար) վերջին տասնամյակում շարունակաբար նվազում է՝ պայմանավորված ինչպես համապատասխան տարիքային խմբի մշտական բնակչության նվազմամբ, այնպես էլ բնակչության աղքատության մակարդակի աճով: Եվ դա նույնիսկ այն պարագայում, երբ պետությունն ավելացրել է անվճար տեղերի թիվը,
- ընտանիքների գրեթե կեսի ամսական սպառման գումարը խոչընդոտ է վճարովի հիմունքներով բարձրագույն կրթությամբ սովորող երեխա ունենալու համար,
- աղքատության մակարդակն իջեցնելու և սոցիալական արդարության համար բնակչության բոլոր խմբերի և, հատկապես, աղքատ խմբերի համար հավասար հնարավորությունների ապահովումը պետք է դառնա պետական քաղաքականության օրակարգային խնդիրը[1]:

4. Հասարակության հնաբնակը. կոռուպցիա

Արդի բազմաթիվ ուսումնասիրություններում գործում է անդրադարձը անցյալին, ցույց տալու, թե որքան հին է կոռուպցիան, որ այն ոչ թե նորօրյա ծնունդ է, այլ ի սկզբանե հասարակության ուղեկիցը՝ որպես տնտեսական ու սոցիալական կարգը աղարտող երևույթի: Վերածննդի ժամանակաշրջանի հայտնի մտածող, հումանիստ Նիկոլո Մաքիավելին այն նմանեցնում է հիվանդության. «Բժիշկներն

[1] Բանբեր Երևանի համալսարանի, տնտեսագիտություն, 2022,№2, էջ 3-18:

ասում են, թե սկզբում հիվանդությունը դժվար է հասկանալ, բայց հեշտ է բուժել, իսկ, եթե այն անուշադրության է մատնված, ապա հեշտ է ճանաչել, բայց դժվար է բուժել: Այդպես է նաև պետության գործերում, եթե ժամանակին հայտնաբերվի ծնվող հիվանդությունը, որը տրված է միայն երկրի իմաստուն տիրակալներին, ապա դրանից ազատվելը դժվար չէ, բայց, եթե այն բարձիթողի և բոլորի համար տեսանելի է, ապա ոչ մի դեղամիջոց արդեն չի օգնի»[1]:

Որպես համաշխարհային երևույթ չկա մի երկիր, որում կոռուպցիան բացակայում է: Խոսքը չափերի դրսևորման ձևերի մասին է՝ կապված օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալների, առանձին երկրներին բնորոշ սոցիալ-տնտեսական պայմանների ու հանգամանքների, ինչ խոսք նաև ազգային մենթալիտետի (մտախառնվածքի) հետ: Պատմությունից կարելի է վկայակոչել կոռուպցիան եթե ոչ վերացնելու, այլ կրճատելու վերաբերյալ բազմաթիվ պատիժներ և օրենքներ, որոնք սակայն իրենց հետևանքների մեջ գործել են մինչև մի որոշակի սահման: Հայտնի է կոռուպցիայի դասական երկրներից մեկում՝ Ռուսաստանում այդ ուղղությամբ Իվան Ահեղի, Պետրոս Առաջինի և Եկատերինա Երկրորդի որոշումներն ու օրենքները: Ռուս գրող Յակով Գորդինը «Власть чести, честь власти» հոդվածում անդրադառնալով Պետրոս Առաջինի իշխանավորների կողմից կատարվող յուրացումներին, որոնք չէին վստահում նրա ստեղծած համակարգի հարատևությանը, վկայակոչում է դեկաբրիստ Մ.Ֆոնվիզենին, որը «ճշգրիտ և համոզիչ» բնութագրել է կայսրի սկզբունքային սխալը. «Երազելով վերադաստիարակել իր հպատակներին, նա չի մտածել նրանցում ներշնչել մարդկային արժանապատվության բարձր զգացմունքներ, առանց որի գոյություն չունի ոչ իսկական բարոյականություն, ոչ առաքինություն»[2]: Ինչպես նկատում է Նիցշեն՝ «Չկա ավելի վտանգավոր մոլորություն, քան հետևանքը պատճառի հետ խառնելը»:

Կոռուպցիայի թելը երկրում շարունակվում է առայսօր և ավելի մեծ չափերով խորհրդային կարգերից շուկայականին անցնելու պրոցեսներում, երբ բացակայում էին ինստիտուցիոնալ կառույցների բացակայությունը: Ոչ պատահականորեն հանրապետությունում կառավարության հակակոռուպցիոն ծրագրերի մշակումը սկիզբ է առնում 2000-ականներից սկսած*: Ինչ խոսք, ուշագրավ է կոռուպցիայի քննադատությանն ուղղված տեսական ասույթները, բանաձևերն ու որոշումները: Իսկ իրողությունն այն է, որ անցումը նոր հարաբերություններին ընդլայնեց երևույթի հնարավորություններն ու այն ծնող կապերը: Այդ պայմաններում համակարգի վրա ներգործական միջոցների բացակայությունը պիտի փոխարինվեր այլ միջոցներով, որոշ իմաստով կատարելով տարերային հավասարակշռող ֆունկցիա: Ու, թեև կոռուպցիան ընդունել է մեծ մասշտաբներ, այդուհանդերձ

---

[1] Макиавелли Н., Государь: сочинения, Н.Макиавелли, М. ЭКСМО-пресс, 2001.

[2] Տե՛ս, Литературная газета, №23,14-20 июня 2023.

* Այդ մասին հանգամանորեն տե՛ս Է.Մաթևոսյանի և Մ.Դետլոֆֆի «Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումները և կարգավորման հիմքերը» ուսումնասիրությունը (Սոցիալ-տնտեսական...2023, №1, էջ 69-81):

դրանում առկա էր «դրական պահի» նշանակությունը: Ս.Ալատասը հենց այս ընկալմամբ նկատում է, թե կոռուպցիոն բաղկացուցիչը երրորդ աշխարհի երկրների համար համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու պրոցեսում, կարող է ունենալ խթանիչ ներգործություն: Տնտեսական անկումների, նոր քաղաքական համակարգերին անցնելու շրջանում այն պարզեցնում է տնտեսական հարաբերությունները քաղաքացիների միջև, այսինքն՝ ծառայում է որպես պետության կառավարման թերությունները հավասարակշռող բնական մեխանիզմ[1]: Եվ չի կարելի չհամաձայնել այն կարծիքի հետ, որ այդ «միջավայրը» հանգամանալից քննության կարիք ունի: Մինչդեռ, ինչպես նկատում են Է.Մաթևոսյանը, Ա.Մարկոսյանը և Մ.Դետլոֆֆը «Կոռուպցիայի և դրա դրսևորումների վերաբերյալ մինչ այժմ ՀՀ–ում վարվող քննարկումների հիմնական խնդիրը մնում է այնպիսի հանրային կարծիքի ձևավորումը, որը կոռուպցիան կդիտարկի որպես հասարակությանը սպառնացող վտանգ: Սակայն, որքան հեշտ է զբաղվել բարոյականության բարձր արժեքներ քարոզելով և կոռուպցիան արմատախիլ անելու հայտարարություններով ու ձգտումներով, այնքան ավելի դժվար է ապրել և գործել հռչակված սկզբունքներին համապատասխան»[2]:

Գոյություն ունի այսպես կոչված «Կոռուպցիայի ընկալման ինդեքս», որը բազմաթիվ աղբյուրներից ստացված տվյալների արդյունքում պատկերացում է տալիս տարբեր երկրներում այդ երևույթի հարաբերական աստիճանի և առանձնահատկությունների մասին: Սոցիոլոգիական հարցումները թույլ են տալիս սինթետիկ պատկերացում ստանալու երևույթի հանրային ընկալումների մասին[*]: Օրինակ, ըստ այդպիսի հարցումների ԱՄՆ-ի քաղաքացիների 46 տոկոսը գտնում է, որ երկիրը շարժվում է սխալ ուղղությամբ, իսկ 61 տոկոսի կարծիքով երկիրը կառավարվում է ելնելով որոշ խմբերի շահերից: Արդյունքներն արտահայտում են սահմանումներում հաճախ շեշտվող այն հանգամանքը, որ կոռուպցիան խմբակային կամ պետական ծառայողների պաշտոնական դիրքի չարաշահման երևույթ է: Լյուդվիգ Միզեսը այս իմաստով նկատում է, թե «Ցավոք պաշ-

---

[1] Տե՛ս, Бутков А.В., Ильин И.В., О некоторых теоретических подходов к феномену коррупции, Вестник Нижегородской академии МВД России, 2015, №1, (29), с. 19.

[2] Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու 2023, №1, էջ ...:

[*] Литературная газета, 25-31 марта, 2015.Ընդհանրապես ամբողջական կարծիքի համար անհրաժեշտ է ազատական պահվածքը «զսպող հանգամանքների» բացակայության մասին: Մինչդեռ ըստ որոշ հարցումների հանրապետությունում կոռուպցիայի ամենատարածված ոլորտներն են առողջապահությունն ու կրթությունը, իսկ պետական եկամուտների, մաքսային և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն դրսևորումները նվազել են: Իսկ «Սա ևս մեկ անգամ հաստատում է այդ միտքը,– նկատում են հեղինակները,–որ կոռուպցիայի դեմ պայքարը ընկալվում է որպես իշխանությունների մենաշնորհ (վերջին տարիներին ամենաշատ ուշադրությանը դարձվում էր կոռուպցիայի դեմ պայքարին), մինչդեռ քաղաքացիներն իրենց դերակատարումը չեն տեսնում այնպիսի ոլորտներում կոռուպցիայի վերացման գործում, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, ներառյալ՝ կրթության բոլոր մակարդակները) և տնտեսության մյուս ոլորտները, որոնք գործում են շուկայական հարաբերությունների շրջանակում» (նույն տեղում, էջ 28):

տոնատար անձիք և նրանց ապարատը բնավ հրեշտակներ չեն։ Նրանք շատ արագ իմանում են, որ առևտրականների համար իրենց որոշումները ենթադրում է կամ նշանակալից վնասներ, կամ ժամանակ առ ժամանակ նշանակալից շահույթներ։ Անխոս, գոյություն ունեն բյուրոկրատներ, ովքեր կաշառք են վերցնում, սակայն մյուսները ձգտում են օգտվել ցանկացած «անվտանգ» հնարավորությունից, «փայի մեջ մտնել» նրանց հետ, որոնց համար շահավետ են իրենց որոշումները»[1]։

Եթե արտահայտվելու լինենք Նիլ Ֆերգյուսոնի «Հրապարակն ու աշտարակը. ցանցերն ու իշխանությունը մասոններից մինչև ֆեյսբուք» աշխատության լեզվով, դրանց որոշակի ցանցեր են, երբ փոխներգործության սկզբունքով «աշխարհիկ իշխանության խորհրդանիշ աշտարակը վեր է խոյանում և իր մութ ստվերն է նետում սովորաբար որպես շուկա և հասարակական այլ հավաքների վայրը ծառայող հրապարակի վրա»։ Եվ այս իմաստով նա սխալ է դիտում ավստրիացի տնտեսագետ Ֆրիդրիխ Հայեկի պետության և շուկայի մեջ գծած պարզ հակադրության տեսակետը։ Այսինքն՝ գործում է «միմյանց աջակցելու փոխադարձ ընդունելի գործունեության» սկզբունքը. նման որոշակի միությունների, որոնք, ինչպես ասում է Ադամ Սմիթը «հազվադեպ են հավաքվում նույնիսկ ուրախության առիթով՝ առանց իրենց շփումը հանրության հանդեպ դավադրությամբ կամ գները բարձրացնելու ինչ-որ համաձայնությամբ ավարտելու»[2]։

* *
*

Վերջին տասնամյակներին ինչ զուգահեռներ ասես չեն գծվել, փորձելով պատվաստել և տեղայնացնել այլ երկրների փորձը։ Դրանք վերջիններիս պատմությունից քաղված կենսագրական փաստեր են, որոնք ենթակա չեն նույնականացման։ Ուստի տեղին է նորից կրկնել, որ օրինականության բոլոր խախտումները տեղական բազմաթիվ պայմանականությունների արդյունք են, որոնց նվազագույնի հասցնելու «ամենագործուն միջոցները» «պետք է ստեղծենք մենք ինքներս, չենք կարող արտագրել որևէ մեկից»[3]։

Օգտագործված գրականության ցանկ

1. Բանբեր Երևանի համալսարանի. Տնտսագիտություն, 2022, №1, էջ 32։
2. Բանբեր Երևանի համալսարանի, տնտեսագիտություն, 2022,№2, էջ 3-18։
3. Մաթևոսյանի Է. և Դետլոֆֆի Մ. «Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումները և կարգավորման հիմքերը» ուսումնասիրությունը, (Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները

---

[1] Людвиг фон Мизес, Человеческая деятельность. Трактат экономической теории, Челябинск, 2005, с. 689.
[2] Տե՛ս, նշված աշխատությունը, Եր., 2021, էջ 51-52։
[3] Литературная газета, 25-31 марта, 2015.

Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու,2023, №1, էջ 69-81):
4. Մանուչարյան Մ.Գ., «Թվային տնտեսություն. Ագրարային ոլորտի զարգացման հեռանկարներ», Եր., 2022, էջ 39:
5. «Մշակ» 1902, № 97:
6. Մաքս Բորն, Իմ կյանքը ու հայացքները, Եր., 1978, էջ 42:
7. Սերգեյ Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, հ.Ա, Եր., 2004, էջ 397:
8. Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու, 2022, №2, էջ 431-443:
9. АиФ, №29, 2020
10. Бутков А.В., Ильин И.В., О некоторых теоретических подходов к феномену коррупции, Вестник Нижегородской академии МВД России, 2015, №1, (29), с. 19.
11. Вестник Московского университета, серия 18. Социология и политика, 2022, т. 28, №3, с.7.
12. Вестник Московского университета..., с.18.
13. Литературная газета, 25-31 марта, 2015.
14. Литературная газета, №23,14-20 июня 2023.
15. Литературная газета, №24, 19-25 июля, 2019г.
16. Людвиг фон Мизес, Человеческая деятельность. Трактат по экономической теории, Челябинск, 2005, с. 785.
17. Макиавелли Н., Государь: сочинения, Н.Макиавелли, М. ЭКСМО-пресс, 2001.
18. Правда, 27 февраля, 1989г.
19. Социологическая наука и социальная практика, М., 2020, т.8, с. 41-53:
20. Проблемы социально-экономического развития, поиски, перспективы, решения, Российский экономический университет им. Г.В.Плеханова, Ереванский филиал, сборник научных статей, 2022, №1 (7), с. 176.

References

1. Banber Er&ani hamalsarani. Tntsagitowt'yown, 2022, №1, e'j 32:
2. Banber Er&ani hamalsarani, tntesagitowt'yown, 2022,№2, e'j 3-18:
3. Mat'&osyani E'. & Detloffi M. «Hayastani Hanrapetowt'yownowm irakanacvogh hakakor'owpcion mijocar'owmnery' & kargavorman himqery'» owsowmnasirowt'yowny', (Social-tntesakan zargacman ardi himnaxndirnery' Hayastani Hanrapetowt'yownowm, gitakan hodvac'neri jhoghovac'ow,2023, №1, e'j 69-81):
4. Manowcharyan M.G., «T'vayin tntesowt'yown. Agrarayin olorti zargacman her'ankarner», Er., 2022, e'j 39:
5. «Mshak» 1902, № 97:
6. Maqs Born, Im kyanqy' ow hayacqnery', Er., 1978, e'j 42:
7. Sergey Sarinyan, Hayoc grakanowt'yan erkow dary', h.A, Er., 2004, e'j 397:

8. Social-tntesakan zargacman ardi himnaxndirnery' Hayastani Hanrapetowt'yow-nowm, gitakan hodvac'neri jhoghovac'ow, 2022, №2, e'j 431-443:
9. AiF, #29, 2020
10. Butkov A.V., Il'in I.V., O nekotoryh teoreticheskih podhodov k fenomenu korrupcii, Vestnik Nizhegorodskoj akademii MVD Rossii, 2015, #1, (29), s. 19.
11. Vestnik Moskovskogo universiteta, serija 18. Sociologija i politika, 2022, t. 28, #3, s.7.
12. Vestnik Moskovskogo universiteta..., s.18.
13. Literaturnaja gazeta, 25-31 marta, 2015.
14. Literaturnaja gazeta, #23,14-20 ijunja 2023.
15. Literaturnaja gazeta, #24, 19-25 ijulja, 2019g.
16. Ljudvig fon Mizes, Chelovecheskaja dejatel'nost'. Traktat po jekonomicheskoj teorii, Cheljabinsk, 2005, s. 785.
17. Makiavelli N., Gosudar': sochinenija, N.Makiavelli, M. JeKSMO-press, 2001.
18. Pravda, 27 fevralja, 1989g.
19. Sociologicheskaja nauka i social'naja praktika, M., 2020, t.8, s. 41-53:
20. Problemy social'nojekonomicheskogo razvitija, poiski, perspektivy, reshenija, Rossijskij jekonomicheskij universitet im. G.V.Plehanova,

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Ռոբերտ Ներսեսի Սարինյան
Բելլա Վալերիի Գաբրիելյան
Լիանա Կառլենի Հարությունյան

Համառոտագիր: Տեսության և տնտեսագիտական մտքի պատմության բաժինը պարբերաբար հանդես է եկել տեսությունների միջոցով ներկայացնելու արդի հայ տնտեսագիտական մտքի արծարծումները, փոխվել է վերջին տարիների հանրապետության տնտեսագիտական մտքի տեսադաշտը: Սակավ են դարձել տեսական բնույթի ուսումնասիրությունները: Առաջնային են դարձել ոլորտի, ճյուղի, կազմակերպության մակարդակով հետազոտությունները՝ տուրք տալով բազմիցս կրկնվող առաջարկությունների գայթակղությանը, «բոլորը դարձել են ուսուցիչ, առանց աշակերտ լինելու»: Հաճախ այսպես կոչված «հիմնախնդիր-ների» համար առաջարկվող լուծումները գերազանցում են բուն վերլուծությունը, անգիտանալով, որ դրանցից յուրաքանչյուրը կապված է բազմաթիվ այլ լուծում-ների հետ: Ինչպես կասեր Վոլտեր Օյկենը «ձևավորվել են կողք կողքի գոյություն ունեցող տնտեսագետների երկու տիպեր», առանց այդ միասնության հնարավոր չէ իմաստավորել տնտեսական գործընթացների իրական ընթացքը:

Սույն հոդվածում վերլուծության համար նյութն ընտրվել է հայեցողական սկզբունքով: Դրանք վերաբերում են թվային տնտեսության գործնական սկզբունք-

ների, «նոր աղքատության» դրսևորումներին, կրթության ու աղքատության փոխկախվածության, կոռուպցիայի ֆենոմենի և այլ հարցերի։

Հոդվածի արդիականությունը: Քննական հայացքով պարբերական տեսությունները հնարավորություն են տալիս ուշադրություն սևեռելու տնտեսական կյանքում կատարվող պրոցեսներում թերությունների վրա։

Բանալի բառեր. թվային տնտեսություն, հումանիզմ և ապահումանիզմ, կրթություն, նոր աղքատություն, թետչերիզմ, ռեյգանոմիկա, շուկայական տնտեսություն, բարձրագույն կրթություն և աղքատության փոխկախվածություն, կոռուպցիա։

ЭКОНОМИЧЕСКИЕ СООБРАЖЕНИЯ

Роберт Нерсесович Саринян
Белла Валерьевна Габриелян
Лиана Карленовна Арутюнян

Аннотация. Отдел теории и истории экономической мысли периодически, в ввиде обзоров, представлял процессы, имеющие место в современной армянской экономической мысли. В последние годы изменилось поле исследовательско-экономической мысли Республики. Исследования теоретического характера сократились. Первичными стали исследования на уровне отрасли, организации, отдавая дань соблазну многократно повторяющихся предложений: «все стали учителями, не побывав учениками». Часто решения, предлагаемые для так называемых «проблем», превосходили сам анализ, не понимая, что каждое из них связано с множеством других решений. Как говорил Вольтер Ойкен «сформировалось два типа экономистов, существующих бок о бок», без этого единства невозможно осмыслить реальный ход экономических процессов.

В этой статье материал для анализа был выбран по дискреционному принципу. Они касаются практических принципов цифровой экономики, проявлений «новой бедности», взаимосвязанности образования и бедности, феномена коррупции и других вопросов.

Актуальность статьи. Периодические обзоры дают возможность обратить внимание на недостатки в процессах, происходящих в экономической жизни.

Ключевые слова: цифровая экономика, гуманизм и дегуманизация, образование, новая бедность, тэтчеризм, рейганомика, рыночная экономика, высшее образование и взаимозависимость бедности, коррупция.

ECONOMIC REMARKS

Robert Nerses Sarinyan
Bella Valery Gabrielyan
Liana Karlen Harutyunyan

Abstract. The Department of the Theory and history of Economic Thought has regularly presented the developments of modern Armenian economic thought through theories, the field of view of the economic thought of the republic has changed in recent years. Studies of a theoretical nature have become rare. Studies on the level of field, sector, and organization have become the priority, paying tribute to the temptation of repeated suggestions, "Everyone has become a teacher without being a student". Often, the proposed solutions for the so-called "problems" exceed the actual analysis, not knowing that each of them is related to many other solutions. As Walter Oiken would say, "Two types of economists have been formed that exist side by side", without this unity it is not possible to make sense of the real course of economic processes.

The materials for analysis in this article were chosen on a discretionary basis. Those materials refer to the practical principles of the digital economy, the manifestations of "new poverty", the interdependence of education and poverty, the phenomenon of corruption, and other issues.

Relevance of the article. With an analytical view, periodic theories provide an opportunity to draw attention to the shortcomings in the processes of economic life.

Keywords: digital economy, humanism and dehumanism, education, new poverty, Thatcherism, Reaganomics, market economy, higher education and interdependence of poverty, corruption.